ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» դեկտեմբերի 2009թ. N -Ն

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան՝

**Երեւան քաղաքի ավագանին *որոշում է.***

1. Հաստատել Երեւան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարման 2010 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1)հողամասերն օգտագործման տրամադրելու եւ օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի եւ օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմանը համապատասխան.

2)հողամասերը հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում մեկնարկային գինը որոշվում է Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Համաձայնություն տալու մասին» N 11-Ա որոշմամբ.

3)ինքնակամ կառույցների օգտագործման տրամադրելու եւ օտարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման մասին» N 12-Ա որոշման, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմանը համապատասխան.

4) քանդման ենթակա վթարային բնակելի տների եւ հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի սեպտեմբերի 23-ի «Երեւան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու եւ Երեւանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» N 23-Ա եւ «Երեւան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու եւ Երեւանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» N 24-Ա որոշումների, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության

կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երեւան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N 172-Ն եւ 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N 682 որոշումներին համապատասխան:

3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրում ներառված օտարման ենթակա հողամասերի մասով ծրագիրն ուժի մեջ է մտնում դրանք Երեւան համայնքին սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Հավելված
Երեւան քաղաքի ավագանու 2009 թվականի
դեկտեմբերի «  »-ի N  -Ն որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Երեւան քաղաքի սեփականություն համարվող գույքի (հողամասեր, բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ, շենքեր եւ շինություններ, ինքնակամ կառույցներ, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցություն եւ այլն) (այսուհետ՝ նաեւ Գույք) օգտագործման տրամադրելու եւ օտարման 2010 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է Երեւան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման եւ բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրների, ինչպես նաեւ Երեւան համայնքի բնակիչների բնակարանային հարցերի լուծմանը:

2.2010 թվականի ընթացքում Գույքի օգտագործման տրամադրելու եւ օտարման հիմնական նպատակներն են.

1) Գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը.

2) Գույքի օտարումից, վարձակալության (կառուցապատման) հանձնելուց ստացված միջոցների հաշվին Երեւանի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը:

3.Գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երեւան քաղաքի ավագանու որոշմամբ՝ բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

4.Երեւան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները եւ բնակելի տները կարող են Երեւանի քաղաքապետի որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել այն անձին (անձանց) կամ ընտանիքներին, որոնք՝

1)«Հայաստանի Հանրապետության պետական, հանրային եւ համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» եւ «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան հանդիսացել են սեփականաշնորհման (մասնավորեցման) սուբյեկտ եւ /կամ/ վարձակալ, դրանց գործողության ժամանակահատվածում չեն սեփականաշնորհել (մասնավորեցրել) իրենց բնակարանները կամ բնակելի տները, ներկայումս հաշվառված ու մշտապես (փաստացի) բնակվում են այդ բնակարաններում կամ բնակելի տներում.

2)Երեւանի քաղաքապետի, Երեւանի թաղային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների եւ կարգադրությունների կամ սահմանված կարգով ուժի մեջ մտած դատարանի վճիռների հիման վրա մշտապես (փաստացի) բնակվում են դրանցում եւ հաշվառված են այդ բնակարաններում կամ բնակելի տներում:

5.Երեւանի քաղաքապետի Գույք օտարելու որոշմամբ այն ձեռքբերողին կարող է տրվել տարաժամկետ վճարման իրավունք:

6.Գույքի օտարումն իրականացվում է հետեւյալ ձեւերով՝

1) աճուրդ.

2) մրցույթ.

3) ուղղակի վաճառք:

7. Գույքի օտարման ձեւի մասին որոշումն ընդունում է Երեւանի քաղաքապետը:

8.Գույքը հրապարակային սակարկություններով օտարման ներկայացնելիս ընտրվում է մրցույթով վաճառքի ձեւը, եթե Գույքի գնորդը սեփականության իրավունքի ձեռք բերման հետ մեկտեղ Գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման հետ կապված պետք է ստանձնի որոշակի պարտավորություններ:

9.Գույքը հրապարակային սակարկություններով օտարման ներկայացնելիս ընտրվում է աճուրդով վաճառքի ձեւը, եթե գնորդից չի պահանջվելու կատարել Ծրագրի 8-րդ կետում նշված պարտավորությունները:

10.Գույքը կարող է օտարվել ուղղակի վաճառքի ձեւով՝

1) տվյալ Գույքի վարձակալին.

2) տվյալ Գույքի հավանական գնորդին, եթե այն նախօրոք հայտնի է.

3) ձեռք բերողներին՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում:

11.Գույքի օտարումից ստացված միջոցներն ուղղվում են Երեւան համայնքի բյուջե:

12.Լրիվ մաշված կամ օգտագործման համար ոչ պիտանի Գույքի դուրսգրումն իրականացվում է Երեւանի քաղաքապետի որոշմամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## II. ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

13. Գույքի գնահատումն իրականացվում է՝

1) անշարժ Գույքի դեպքում՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան.

2) այլ Գույքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային եւ շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» N 209 որոշմամբ սահմանված կարգով կամ անկախ գնահատողի կողմից:

14.Գույքի օտարման որոշումը պետք է ներառի տեղեկություններ՝

1) Գույքի նկարագրության, դրա գնահատման տարեթվի եւ ամսաթվի մասին,

2)օտարման ձեւի, այդ թվում՝ որպես Գույքի մեկ միավոր կամ որպես Գույքի առանձին տարրեր օտարելու մասին.

3)Գույքն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության եւ յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) Գույքը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին, որը պետք է լինի վերջին կազմակերպված աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 10 տոկոսի չափով.

4)Գույքն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, օտարվող Գույքի վաճառքի գնի, վճարման կարգի, վճարման համար օգտագործվող միջոցների եւ վճարման ժամկետների մասին.

5) այլ տվյալների մասին:

15.Գույքի մրցույթով օտարման մասին Երեւանի քաղաքապետի որոշմամբ կարող են սահմանվել նաեւ՝

1) մրցույթի հաղթողին որոշելու պայմանների գնահատման կշռային գործակիցներ.

2) մրցույթ մասնակիցների նախնական որակավորման պահանջ:

## III. ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

16.Գույքի վաճառքի նպատակով աճուրդը եւ մրցույթը կազմակերպում ու անցկացնում է Երեւանի քաղաքապետի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը, որի կազմը պետք է բաղկացած լինի առնվազն 5 անդամից: Երեւանի քաղաքապետի որոշմամբ սահմանվում են հանձնաժողովի իրավասությունները:

17.Աճուրդով Գույքի օտարման դեպքում Երեւանի քաղաքապետի որոշմամբ սահմանվում են աճուրդի ձեւը, Գույքը ենթակա է օտարման ամբողջությամբ կամ առանձին լոտերով, օտարվող Գույքի մեկնարկային գինը եւ աճուրդի իրականացման ժամկետները:

18.Երեւանի քաղաքապետի որոշմամբ մրցույթի հաղթողին որոշելու նպատակով կարող են առաջադրվել հետեւյալ պայմանները՝

1) գինը.

2) ներդրումների չափը.

3) այլ պայմաններ:

19.Ծրագրի 16-րդ կետում նշված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմը եւ (կամ) Երեւանի ենթակայության կազմակերպությունները հանձնաժողովին են ներկայացնում՝

1)վաճառքի ենթակա Գույքի ցանկը, որտեղ պետք է նշված լինի յուրաքանչյուր Գույքի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ձեռքբերման (շահագործման հանձնման) տարեթիվը, սկզբնական, հաշվեկշռային եւ գնահատված արժեքները՝ արտահայտված դրամով.

2) տեղեկություններ օտարվող Գույքի վիճակի մասին եւ այլ տեղեկություններ՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի եւ (կամ) Երեւանի ենթակայության կազմակերպությունների հայեցողությամբ:

20.Գույքն ուղղակի վաճառքով օտարման ներկայացվելու դեպքում Գույքի վաճառքի գինը սահմանվում է Ծրագրի 13-րդ կետով սահմանված կարգով գնահատված արժեքի 75 տոկոսի չափով: Գույքը սույն կետով չօտարվելու դեպքում ենթակա է օտարման՝ աճուրդով կամ մրցույթով՝ սույն գլխով սահմանված կարգով:

21.Գույքն աճուրդով կամ մրցույթով օտարման ներկայացվելու դեպքում Գույքի առաջին աճուրդով վաճառքի մեկնարկային կամ առաջին մրցույթով վաճառքի նվազագույն գինը սահմանվում է Ծրագրի 13-րդ կետով սահմանված կարգով գնահատված արժեքի 75 տոկոսի չափով:

22. Գույքը չվաճառվելու դեպքում այն ներկայացվում է նոր աճուրդի (մրցույթի), եթե օտարման մասին որոշմամբ եւ Գույքի աճուրդով (մրցույթով) վաճառքի մասին հայտարարությամբ նման բան նախատեսված է: Չվաճառված Գույքի մեկնարկային (վաճառքի նվազագույն) գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ (եթե այդպիսին նախատեսվում է օտարման մասին որոշմամբ) նվազեցվում է նախորդ (վերջին) աճուրդի (մրցույթի) մեկնարկային գնի 10 տոկոսի չափով:

23.Գույքի աճուրդով (մրցույթով) վաճառքը չի կարող շարունակվել օտարման մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 6 ամսվանից ավելի:

24.Ծրագրի 16-րդ կետում նշված հանձնաժողովը Գույքի օտարման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 15 օրվա ընթացքում 1000 օրինակից ոչ պակաս տպաքանակ ունեցող մամուլում եւ (կամ) Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հրապարակում է Գույքի աճուրդով (մրցույթով) վաճառքի մասին հայտարարությունը, ընդ որում, աճուրդն անցկացվում է հայտարարության հրապարակմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ մրցույթը՝ 30-րդ օրվանից ոչ շուտ:

25. Աճուրդին (մրցույթին) մասնակցելու համար մասնակցի կողմից վճարվում է՝

1) նախավճար՝ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 5 տոկոսի չափով, որը հաղթող մասնակցի համար համարվում է Գույքի վաճառքի գնի մաս եւ չի վերադարձվում, եթե հաղթող մասնակիցը հրաժարվում է հետագա վճարումները կատարելուց, իսկ չհաղթող մասնակցին վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում.

2) մասնակցության վճար՝ 10000 դրամ չափով, որը Գույքի գնի մեջ չի ներառվում, անկախ աճուրդի (մրցույթի) արդյունքներից՝ չի վերադարձվում եւ օգտագործվում է աճուրդի (մրցույթի) կազմակերպման նպատակով:

26.Աճուրդի (մրցույթի) մասնակցության համար միայն մեկ հայտ ներկայացնելը հիմք չի հանդիսանում աճուրդը (մրցույթը) չկայացած համարելու համար:

27. Հրապարակային սակարկությունների (աճուրդ եւ մրցույթ) անցկացման, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ կետով նախատեսված դեպքում ինքնակամ կառույցի հրապարակային սակարկություններով օտարման կամ օգտագործման տրամադրելու կարգերը, սահմանում է Երեւանի քաղաքապետը:

## IV. 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՒՅՔ

28. 2010 թվականին օտարման է առաջարկվում ստորեւ նշված հետեւյալ Գույքը.

### 1) ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՒՅՔ

#### ա. Շինություններ

| h/h | Գույքի անվանումը | Օբյեկտի զբաղեցրած հողատարածքը /մ$^2$/ | Շինության մակերեսը /մ$^2$/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. 1 | Կաթսայատուն Ալավերդյան 46 | 11.78 | 11.8 |
| 2. | Կաթսայատուն Բրյուսովի 28/1 | 201.0 | 173.8+27.2 |
| 3. | Կաթսայատուն Դեմիրճյան 27 | 277.6 | 265.0+12.6 |
| 4. | Կաթսայատուն Սարյան 24 | 141.2 | 124.32 |
| 5. | Կաթսայատուն Սայաթ-Նովա 29ա | 278.0 | 249.8 |
| 6. | Կաթսայատուն Սայաթ-Նովա 14$^{ա}$ | 112.6 | 112.6 |
| 7. | Կաթսայատուն Սայաթ-Նովա 4 | 119.11 | 119.11 |
| 8. | ԿՋՀ h.1 Խորենացու 8 | 184.3 | 158.72 |
| 9. | ԿՋՀ h.2 Սուրբ Սարգիս | 280.2 | 256.39+23.8 |
| 10. | ԿՋՀ h.3/3$^{ա}$ Սարյան 33$^{ա}$ | 365.5 | 314.25+16.78 |
| 11. | ԿՋՀ h.5 Պուշկինի 60 | 170.2 | 155.8 |
| 12. | ԿՋՀ h.7 Մոսկովյան 28 | 267.0 | 224.61+11.6 |
| 13. | ԿՋՀ h.8 Ամիրյան 12 | 183.2 | 162.5 |
| 14. | ԿՋՀ h.9 Մաշտոցի 29 | 286.15 | 238+8.55+11.4 |
| 15. | ԿՋՀ Նալբանդյան 102 | 150.7 | 150.7 |
| 16. | ԿՋՀ Սարյան 36 | 312.5 | 312.5 |
| 17. | ԿՋՀ Թումանյան 9/9ա | 306.5 | 306.5 |

| | | | |
|---|---|---|---|
| 18. | ԿՋՀ Տպագրիչների 13 | 267.7 | 267.7 |
| 19. | ԿՋՀ Կուրղինյան 27 | 154.91 | 162,56 |
| 20. | ԿՋՀ 24/25 Ագաթանգեղոսի 7 | 251.4 | 251.4 |
| 21. | ԿՋՀ «Երեւաննախագիծ» ինստիտուտ | 175.91 | 178.46 |
| 22. | Կաթսայատուն Մ.Հերացու 18ա | 213.44 | 192.9 |
| 23. | ԿՋՀ 2 Մաշտոցի 52 | 187.89 | 187.89 |
| 24. | ԿՋՀ 1/2 Հանրապետական մարզադաշտ | 325.29 | 301.55 |
| 25. | ԿՋՀ 3/4 Հանրապետական մարզադաշտ | 332.72 | 307.0+25.7 |
| 26. | ԿՋՀ 7 Տիգրան Մեծի 29ա | 148.6 | 148.6 |
| 27. | ԿՋՀ 28 Այգեստան փողոց | 158.8 | 158.8 |
| 28. | Մազութային տնտեսության շենք, Զաքիյան 2/1 | 507.5 | 125.0 |
| 29. | ԿՋՀ 16 Չարենցի 10 | 182.5 | 182.5 |
| 30. | ԿՋՀ 18/19 Նալբանդյան 57 | 288.3 | 288.3 |
| 31. | ԿՋՀ 14 Խանջյան 43 | 210.6 | 210.6 |
| 32. | ԿՋՀ 35 Աբովյան 35 | 168.3 | 168.3 |
| 33. | ԿՋՀ 36 Չարենցի 68/70 | 68.8 | 68.8 |
| 34. | ՇՋԿ հ.2 «Չարենց» | 5096.0 | 1250+37.5+125+25 |
| 35. | Կաթսայատուն Խորենացու 30 | 156.89 | 156.9 |
| 36. | Կաթսայատուն Խորենացու 47 | 146.7 | 144 |
| 37. | Կաթսայատուն Տիգրան Մեծի 26 | 305.0 | 305 |
| 38. | Կաթսայատուն Տիգրան Մեծի 36 | 218.5 | 192.0 |
| 39. | Կաթսայատուն Տիգրան Մեծի 53 | 233.0 | 226.8 |
| 40. | Կաթսայատուն Սովխոզային 71 | 34.35 | 34.35 |
| 41. | Կաթսայատուն Կիլիկիա 1 | 414.5 | 266.6+118.9 |

| | | | |
|---|---|---|---|
| 42. | Կաթսայատուն Դեմիրճյան 40 | 195.27 | 184.8 |
| 43. | Կաթսայատուն Էջմիածնի /Իսակովի/ պողոտա | 191.19 | 185.4 |
| 44. | Կաթսայատուն Ջրաշատի 92 | 193.6 | 193.6 |
| 45. | Կաթսայատուն Նիզամի 50 | 435.9 | 435.9 |
| 46. | Կաթսայատուն Նաիրյան 42 | 260.0 | 260.0 |
| 47. | ԿՋՀ Մայիսի 9/3 | 148.75 | 148.75 |
| 48. | ԿՋՀ Նիզամի 26 | 150.0 | 150.0 |
| 49. | ԿՋՀ Չեխովի 14 | 151.2 | 151.2 |
| 50. | ԿՋՀ Գ.Նժդեհի 25 | 339.3 | 239.3 |
| 51. | ԿՋՀ Գ.Նժդեհի 27 | 165.5 | 162.5 |
| 52. | ԿՋՀ Հայէլեկտրո գործարան | 160.2 | 160.2 |
| 53. | ԿՋՀ «Նաիրիտ» ԳԱՄ | 151.65 | 151.65 |
| 54. | ԿՋՀ Ծերեթելի 44 | 195.5 | 367.2 |
| 55. | ԿՋՀ Բագրատունյաց 22 | 301.45 | 301.45 |
| 56. | ԿՋՀ Չեխովի 32 | 451.7 | 366.3+85.4 |
| 57. | ԿՋՀ Բագրատունյաց 49 | 232.5 | 232.5 |
| 58. | ԿՋՀ Եռանկյունի թաղամաս 1/2 | 306.9 | 306.9 |
| 59. | ԿՋՀ Եռանկյունի թաղամաս 3/4 | 402.13 | 402.1 |
| 60. | ԿՋՀ Եռանկյունի 5 | 236.3 | 236.3 |
| 61. | ԿՋՀ Բագրատունյաց 17 | 75.64 | 75.64 |
| 62. | ԿՋՀ Շիրակի 12/14 | 258.4 | 244.16 |
| 63. | ԿՋՀ Շիրակի 8/10 | 206.0 | 206.0 |
| 64. | ԿՋՀ լվացքատուն | 518.4 | 422.4+96 |
| 65. | ԿՋՀ Շենգավիթ 1 | 236.7 | 236.7 |

| | | | |
|---|---|---|---|
| 66. | ԿՋՀ Շենգավիթ 11 | 329.0 | 329.0 |
| 67. | ԿՋՀ Արշակունյաց 30/32 | 135.94 | 135.94 |
| 68. | ԿՋՀ Շենգավիթ 2/3 | 316.8 | 316.8 |
| 69. | ԿՋՀ Բագրատունյաց 39 | 94.3 | 94.3 |
| 70. | ՇՋԿ h.4 Նոր-Նորքի 3 զանգված | 11011.0 | 1159.4+20+40+65 |
| 71. | ՇՋԿ h.5 Նոր-Նորքի 8 զանգված, Մինսկի 5/8 | 24678.41 | 2400+200 |
| 72. | Նոր-Նորքի 1-ին մ/շ ԿՋՀ 1/2 | 380.0 | 306.3 |
| 73. | Նոր-Նորքի 1-ին մ/շ ԿՋՀ 3/4 | 400.55 | 312.5+10.6 |
| 74. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –1 | 222.5 | 175.5 |
| 75. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –2 | 205.0 | 185.7 |
| 76. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –3 | 246.6 | 166.6 |
| 77. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –4 | 192.0 | 158.0 |
| 78. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –5 | 248.8 | 225.7 |
| 79. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –8 | 354.0 | 264.0 |
| 80. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –9 | 205.0 | 163.8 |
| 81. | Նոր-Նորքի 2-րդ մ/շ ԿՋՀ –10 | 354.48 | 307.4 |
| 82. | Նոր-Նորքի 3-րդ մ/շ ԿՋՀ –1 | 293.4 | 245.5 |
| 83. | Նոր-Նորքի 3-րդ մ/շ ԿՋՀ –2 | 276.5 | 206.3 |
| 84. | Նոր-Նորքի 4-րդ մ/շ ԿՋՀ –1 | 360.37 | 254.5 |
| 85. | Նոր-Նորքի 4-րդ մ/շ ԿՋՀ –2 | 260.57 | 241+17.0 |
| 86. | Նոր-Նորքի 4-րդ մ/շ ԿՋՀ –3 | 288.0 | 236.3 |
| 87. | Նոր-Նորքի 4-րդ մ/շ ԿՋՀ –4 | 205.0 | 148.1 |
| 88. | Նոր-Նորքի 5-րդ մ/շ ԿՋՀ -1/2 | 373.34 | 311.2 |
| 89. | Նոր-Նորքի 5-րդ մ/շ ԿՋՀ –3 | 208.53 | 161.8 |

| | | | |
|---|---|---|---|
| 90. | Նոր-Նորքի 5-րդ մ/շ ԿՋՀ –4 | 206.48 | 133.9 |
| 91. | Նոր-Նորքի 6-րդ մ/շ ԿՋՀ -1/2 | 389.0 | 316.9 |
| 92. | Նոր-Նորքի 7-րդ մ/շ ԿՋՀ –1 | 199.1 | 162.5 |
| 93. | Նոր-Նորքի 7-րդ մ/շ ԿՋՀ -2/3 | 422.5 | 337.9 |
| 94. | Նոր-Նորքի 8-րդ մ/շ ԿՋՀ –1 | 158.2 | 158.2 |
| 95. | Նոր-Նորքի 8-րդ մ/շ ԿՋՀ –2 | 266.6 | 156.2 |
| 96. | Նոր-Նորքի 8-րդ մ/շ ԿՋՀ –3 | 241.3 | 241.3 |
| 97. | Նոր-Նորքի 9-րդ մ/շ ԿՋՀ –1 | 242.6 | 242.6 |
| 98. | Նոր-Նորքի 9-րդ մ/շ ԿՋՀ –2 | 334.0 | 251.2 |
| 99. | Նոր-Նորքի 9-րդ մ/շ ԿՋՀ –3 | 248.5 | 248.5 |
| 100. | Նոր-Նորքի 9-րդ մ/շ ԿՋՀ –4 | 242.5 | 242.5 |
| 101. | Կաթսայատուն, Ն. Նորքի 2-րդ մ/շ, Թոթովենցի փող. 9/10 | 161.0 | 161.0 |
| 102. | ԿՋՀ 1 Ջրվեժ ավան | 190.37 | 160.8 |
| 103. | ՇՋԿ h.11 «Ավան» | 13702.0 | |
| 104. | Ավան ԿՋՀ 1/2 | 347.15 | 271.3 |
| 105. | Ավան ԿՋՀ 3/4 | 364.6 | 316.2+11.3 |
| 106. | Ավան ԿՋՀ 5/6 | 380.0 | 329.2+19.1 |
| 107. | Ավան ԿՋՀ 7/8 | 352.6 | 352.6 |
| 108. | Ավան-Առինջ ԿՋՀ-1 | 246.4 | 172.2 |
| 109. | Ավան-Առինջ ԿՋՀ-2 | 221.86 | 179.5+16.95 |
| 110. | Ավան-Առինջ ԿՋՀ-3 | 279.9 | 176.7+17.4 |
| 111. | Աղի հանք ԿՋՀ-1 | 229.9 | 229.9 |
| 112. | Աղի հանք ԿՋՀ-2 | 247.5 | 247.5 |
| 113. | Էլ.ցանց նախագիծ ԿՋՀ | 161.2 | 161.2 |

| | | | |
|---|---|---|---|
| 114. | Կաթսայատուն Զ.Քանաքեռցու 126 | 96.7 | 71.5+12.5 |
| 115. | Կաթսայատուն Զ.Քանաքեռցու 127 | 220.2 | 220.2 |
| 116. | «Լույս» կաթսայատուն | 850.21 | 379.5+308 |
| 117. | «Գեոլոգ» կաթսայատուն | 338.27 | 314.7 |
| 118. | «Ճկուն հատակագիծ 1» կաթսայատուն, Կ. Ուլնեցու փող. 3-րդ փակ. 4/2 | 249.3 | 169.2 |
| 119. | «Ճկուն հատակագիծ 2» կաթսայատուն | 505.0 | 505.0 |
| 120. | Զեյթուն 3 թաղամասի կաթսայատուն | 274.56 | 182.7 |
| 121. | Զեյթուն 3ա թաղամասի կաթսայատուն, Լեփսիուսի 2-րդ փող. 37/6 | 182.25 | 164.3 |
| 122. | Կաթսայատուն Զեյթուն 1/4 | 293.7 | 293.7 |
| 123. | Կաթսայատուն Երիտասարդության 2 | 299.8 | 238.6 |
| 124. | Կաթսայատուն Զեյթուն 6/1 | 270.59 | 244.9 |
| 125. | Կաթսայատուն Զեյթուն 6/2 | 346.48 | 303.0 |
| 126. | Կաթսայատուն Զեյթուն 6/3 | 422.16 | 319.6 |
| 127. | Կաթսայատուն «Ալմաստ» | 158.72 | 245 |
| 128. | Զեյթուն 5 թաղամասի կաթսայատուն | 465.43 | 271.2+72+26 |
| 129. | Կաթսայատուն Ռուբինյանց 5 | 246.12 | 246.12 |
| 130. | Սասունցի Դավիթ 1 կաթսայատուն | 334.2 | 307.5 |
| 131. | «Մեդիկ-2» կաթսայատուն | 362.2 | 315 |
| 132. | Կաթսայատուն Երիտասարդության 28 | 124.75 | 118.7 |
| 133. | Կաթսայատուն Ազատության 8-8ա | 529.2 | 211.2+238.9 |
| 134. | Կաթսայատուն Ազատության 14 | 301.75 | 243.2 |
| 135. | Կաթսայատուն, Դավիթ Անհաղթի փող. 7/3 | 282.0 | 252.8 |
| 136. | ԿԶՀ «Ալմաստ» | 266.0 | 158.7 |
| 137. | Պ. Սեւակի 1/1 կաթսայատուն | 157.0 | 136.5 |

| | | | |
|---|---|---|---|
| 138. | հ.16 պոլիկլինիկա | 94.8 | 89.6 |
| 139. | Կաթսայատուն Նոր-Արեշ 15/1 | 101.05 | 98.8 |
| 140. | Կաթսայատուն Նոր-Արեշ 1/25 | 195.5 | 195.5 |
| 141. | Կաթսայատուն Նոր-Արեշ 42 | 322.87 | 300.0 |
| 142. | Կաթսայատուն Արցախի 2 | 452.85 | 318.7+133.5 |
| 143. | Կաթսայատուն Գաջեգործների 74 | 161.4 | 155.4 |
| 144. | Կաթսայատուն Գ.Մահարու 39 | 359.16 | 295.2 |
| 145. | Կաթսայատուն Ս.Դավթի 13 | 158.84 | 151.8 |
| 146. | Կաթսայատուն «Տնկարան 1» | 485.0 | 436.0 |
| 147. | Կաթսայատուն «Տնկարան 2» | 390.6 | 384.2 |
| 148. | Կաթսայատուն Էրեբունի 1 | 239.6 | 230.0 |
| 149. | Կաթսայատուն Էրեբունի 14 | 156.0 | 156.0 |
| 150. | Կաթսայատուն Էրեբունի 29 | 292.1 | 288.1 |
| 151. | ԿՋՀ հ.1 Էրեբունի զանգված | 183.95 | 161.2 |
| 152. | ԿՋՀ հ.2 Էրեբունի զանգված | 163.8 | 163.8 |
| 153. | ԿՋՀ հ.3 Էրեբունի զանգված | 354.0 | 350.0 |
| 154. | ԿՋՀ հ.4 Էրեբունի զանգված | 316.15 | 311.2 |
| 155. | ԿՋՀ հ.5/5ա Էրեբունու զանգված | 175.75 | 171.0 |
| 156. | Կաթսայատուն Ս.Դավթի 70 | 415.0 | 359.9 |
| 157. | Դրասենյակ և պահեստային մաս, Ազատամարտիկների պող. 7/3 | 1225.78 | 156.6 |
| 158. | Պոմպակայան Երեւանի ՋԷԿ-ի մոտ, Տիտոգրադյան փող. 18/3 | 288.0 | 288.0 |
| 159. | Կաթսայատուն Նուբարաշեն ավան | 6196.12.6 | 198+71.4 |
| 160. | ՇՋԿ հ.8 «Աջափնյակ» | 27359.0 | 1440+240+200+144 |
| 161. | ԿՋՀ հ.1 Աջափնյակ 1-ին թաղամաս | 343.0 | 352.5 |

| | | | |
|---|---|---|---|
| 162. | ԿՋՀ հ.2 Աջափնյակ 2-րդ թաղամաս | 202.1 | 167.7+34.4 |
| 163. | ԿՋՀ հ.3 Աջափնյակ 3-րդ թաղամաս | 223.25 | 196.8 |
| 164. | ԿՋՀ հ.4 Աջափնյակ 4-րդ թաղամաս | 288.0 | 252.7 |
| 165. | ԿՋՀ հ.5 Աջափնյակ 5-րդ թաղամաս | 367.6 | 306.3 |
| 166. | ԿՋՀ հ.6 Աջափնյակ 6-րդ թաղամաս | 189.15 | 158.7 |
| 167. | ԿՋՀ հ.7 Աջափնյակ 7-րդ թաղամաս | 214.4 | 174.4 |
| 168. | ԿՋՀ հ.8 Աջափնյակ 8-րդ թաղամաս | 494.5 | 461.4 |
| 169. | ԿՋՀ հ.10 Աջափնյակ 10-րդ թաղամաս | 414.8 | 401.9 |
| 170. | ԿՋՀ հ.1 Աջափնյակ 11-րդ թաղամաս | 225.4 | 225.4 |
| 171. | ԿՋՀ հ.2 Աջափնյակ 11-րդ թաղամաս | 349.93 | 303.9 |
| 172. | ԿՋՀ հ.1 Աջափնյակ 15-րդ թաղամաս | 297.8 | 297.8 |
| 173. | ԿՋՀ հ.5 Աջափնյակ 15-րդ թաղամաս | 309.4 | 239.4 |
| 174. | ԿՋՀ հ.8 Աջափնյակ 15-րդ թաղամաս | 190.83 | 153.7 |
| 175. | ԿՋՀ հ.1 Աջափնյակ 16-րդ թաղամաս | 590.47 | 306.9+283.57 |
| 176. | ԿՋՀ հ.2 Աջափնյակ 16-րդ թաղամաս | 536.2 | 508.4 |
| 177. | ԿՋՀ հ.3 Աջափնյակ 16-րդ թաղամաս | 607.3 | 554.4 |
| 178. | ԿՋՀ հ.4 Աջափնյակ 16-րդ թաղամաս | 506.8 | 506.8 |
| 179. | ԿՋՀ հ.1/2 Լենինգրադյան փողոց | 214.84 | 194.3 |
| 180. | Գործկոմի կաթսայատուն | 157.8 | 130.9 |
| 181. | Կաթսայատուն հ.1 Աջափնյակ 1-ին թաղամաս, Լենինգրադյան փող. 16/4 | 72.0 | 72.0 |
| 182. | Կաթսայատուն հ.6 Աջափնյակ 6-րդ թաղամաս, Շինարարների փող. 29/4 | 82.0 | 82.0 |
| 183. | Կաթսայատուն հ.15/2, Բաշինջաղյան փող. 185/1 | 321.07 | 321.07 |
| 184. | Պոմպակայան 15-րդ թաղամաս, Բաշինջաղյան փող. 175/4 | 381.3 | 381.3 |

| | | | |
|---|---|---|---|
| 185. | Գ-3 թաղամասի ԿՋՀ հ.2, Նազարբեկյան թաղ. 16/3 | 394.1 | 394.1 |
| 186. | Կաթսայատուն հ.10 Աջափնյակ 10-րդ թաղամաս, Մարգարյան փող. 10/6 | 175.3 | 167.3 |
| 187. | Կաթսայատուն «Լենինգրադյան» | 270.6 | 270.6 |
| 188. | Արիեստանոց, Աջափնյակ 5-րդ թաղամաս | 719.59 | 155 |
| 189. | ՇՋԿ հ.3 «Դավթաշեն» | 20891.14 | 1920+40 |
| 190. | ԿՋՀ հ.1 Դավթաշեն 1-ին թաղամաս | 237.5 | 237.5 |
| 191. | ԿՋՀ հ.2 Դավթաշեն 1-ին թաղամաս | 249.0 | 249 |
| 192. | ԿՋՀ հ.3 Դավթաշեն 1-ին թաղամաս | 238.7 | 238.7 |
| 193. | ԿՋՀ հ.4 Դավթաշեն 1-ին թաղամաս | 241.25 | 241.3 |
| 194. | ԿՋՀ հ.1 Դավթաշեն 2-րդ թաղամաս | 237.12 | 237.12 |
| 195. | ԿՋՀ հ.2 Դավթաշեն 2-րդ թաղամաս | 371.25 | 371.25 |
| 196. | ԿՋՀ հ.3 Դավթաշեն 2-րդ թաղամաս | 242.25 | 342.25 |
| 197. | ԿՋՀ հ.1 Դավթաշեն 3-րդ թաղամաս | 322.5 | 322.5 |
| 198. | ԿՋՀ հ.2 Դավթաշեն 3-րդ թաղամաս | 713.2 | 713.2 |
| 199. | ԿՋՀ ՎՆԻՕՖ Դավթաշեն 3-րդ թաղամաս | 246.2 | 246.2 |
| 200. | ԿՋՀ հ.1 Դավթաշեն 4-րդ թաղամաս | 247.0 | 247.0 |
| 201. | ԿՋՀ հ.2 Դավթաշեն 4-րդ թաղամաս | 247.0 | 247.0 |
| 202. | ԿՋՀ հ.3 Դավթաշեն 4-րդ թաղամաս | 265.5 | 265.5 |
| 203. | ԿՋՀ «Արաքս» Դավթաշեն 4-րդ թաղամաս | 264.0 | 264.0 |
| 204. | ԿՋՀ հ.1/2 Հ/Ա Ա-2 թաղամաս | 338.27 | 318.7 |
| 205. | ԿՋՀ հ.3 Հ/Ա Ա-1 թաղամաս | 195.35 | 163.4 |
| 206. | ԿՋՀ հ.4 Հ/Ա Ա-1 թաղամաս | 178.95 | 174.8 |
| 207. | ԿՋՀ հ.5 Հ/Ա Ա-1 թաղամաս | 188.2 | 161.2 |
| 208. | ԿՋՀ հ.6/7 Հ/Ա Ա-3 թաղամաս | 437.0 | 330.8 |

| | | | |
|---|---|---|---|
| 209. | ԿՋՀ h.8 Հ/Ա Ա-3 թաղամաս | 174.0 | 131.0 |
| 210. | ԿՋՀ h.9/10 Հ/Ա Ա-1 թաղամաս | 364.3 | 337.3 |
| 211. | ԿՋՀ h.11/12 Հ/Ա Բ-1 թաղամաս | 357.4 | 282.5 |
| 212. | ԿՋՀ h.13/14 Հ/Ա Բ-1 թաղամաս | 491.8 | 217.9 |
| 213. | ԿՋՀ h.15/16 Հ/Ա Բ-1 թաղամաս | 304.92 | 304.92 |
| 214. | ԿՋՀ h.17/18 Հ/Ա Բ-2 թաղամաս | 342.0 | 315.0 |
| 215. | ԿՋՀ h.19/20 Հ/Ա Բ-2 թաղամաս | 318.8 | 318.8 |
| 216. | ԿՋՀ h.21/22 Հ/Ա Բ-2 թաղամաս | 341.75 | 316.3 |
| 217. | ԿՋՀ h.23/24 Հ/Ա Բ-2 թաղամաս | 356.0 | 317.5 |
| 218. | ԿՋՀ h.25 Հ/Ա Բ-4 թաղամաս | 218.08 | 162.5 |
| 219. | ԿՋՀ h.26 Հ/Ա Բ-3 թաղամաս | 238.0 | 229.9 |
| 220. | ԿՋՀ h.27 Հովնաթան փողոց | 255.76 | 225 |
| 221. | ԿՋՀ h.28 Հրատպետկոմ-1 | 158.76 | 158.76 |
| 222. | ԿՋՀ h.29 Սեբաստիա 78 | 165.06 | 165.1 |
| 223. | ԿՋՀ h.30 «Աէրացիա» կայան | 163.8 | 163.8 |
| 224. | ԿՋՀ h.31 Շահվերդյան 18 | 254.77 | 254.77 |
| 225. | ԿՋՀ h.32 Հրատպետկոմ 2 | 101.76 | 101.76 |
| 226. | ԿՋՀ h.33 Պ.Տիչինա | 58.56 | 58.56 |
| 227. | ԿՋՀ h.35 Արարատյան 1 | 233.0 | 233.0 |
| 228. | ԿՋՀ h.36 Արարատյան 2 | 243.27 | 238.6 |
| 229. | ԿՋՀ h.37 Արարատյան 3 | 206.0 | 130.4 |
| 230. | ԿՋՀ h.38 Բ-1 թաղամաս ԿՋՀ-1 | 381.25 | 381.25 |
| 231. | ԿՋՀ h.39 Բ-1 թաղամաս ԿՋՀ-2 | 312.4 | 312.4 |
| 232. | Կաթսայատուն Սեբաստիա 30 | 376.14 | 310.3 |

| | | | |
|---|---|---|---|
| 233. | Կաթսայատուն Սեբաստիա 50 | 330.0 | 326.0 |
| 234. | Կաթսայատուն Սեբաստիա 50ա | 215.25 | 224.1 |
| 235. | Կաթսայատուն Շիրակի 20/30 | 319.0 | 255.5 |
| 236. | Կաթսայատուն Շիրակի 20/30ա | 166.69 | 168.3 |
| 237. | Կաթսայատուն Շիրակի 56 | 251.9 | 235.6 |
| 238. | «Աէրացիա» կայանի կաթսայատուն, Շիրակի փող. 92/1 | 1563.4 | 626.4 |
| 239. | ՇՋԿ հ.7 Հ/Ա թաղամաս, Շերամի փող. 2/7 | 18302.2 | 1580 |
| 240. | ՇՋԿ հ.7ա Հ/Ա թաղամաս, Շերամի փող. 2/7ա | 11686.0 | 3411.5 |
| 241. | «Հաղթանակ» սովխոզի կաթսայատուն, Հաղթանակ 7-րդ փող. 20/4 | 260.78 | 240.5 |
| 242. | Կաթսայատուն Բաղրամյան 25 | 216.1 | 216.1 |
| 243. | Կաթսայատուն Բաղրամյան 48ա | 150.6 | 123.5 |
| 244. | Կաթսայատուն Բաղրամյան 51/1 | 264.86 | 235.8 |
| 245. | Կաթսայատուն Բաղրամյան 62 | 152.85 | 148.85 |
| 246. | Կաթսայատուն Կոմիտաս 16 | 292.5 | 270.8 |
| 247. | Կաթսայատուն Կոմիտաս 26 | 357.5 | 336.7 |
| 248. | Կաթսայատուն Կոմիտաս 39 | 285.0 | 274.7 |
| 249. | Կաթսայատուն Կոմիտաս 42 | 184.5 | 184.5 |
| 250. | Կաթսայատուն, Կոմիտասի պող. 42/5 | 163.0 | 163.0 |
| 251. | Կաթսայատուն Այգեձոր 79 | 61.0 | 57.0 |
| 252. | Կաթսայատուն Գայդարի 12 | 322.6 | 322.6 |
| 253. | Կաթսայատուն Գայդարի 2 | 114.8 | 83.4 |
| 254. | Կաթսայատուն Բաբայան 26 | 329.5 | 290.0 |
| 255. | Կաթսայատուն Բաբայան 51 | 174.22 | 153.8 |

| | | | |
|---|---|---|---|
| 256. | Կաթսայատուն «Քանաքեռ ՀԷԿ» | 356.5 | 339.5 |
| 257. | Կաթսայատուն Ազատության 11ա | 129.98 | 129.98 |
| 258. | Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2 | 138.0 | 129.9 |
| 259. | Կաթսայատուն Գվարդիականների 7 | 239.33 | 200.1 |
| 260. | Արաբկիր 2-րդ թաղամասի կաթսայատուն | 327.75 | 308.1 |
| 261. | Կաթսայատուն Կասյան 4 | 154.24 | 107.3 |
| 262. | Կաթսայատուն Ֆուրամովի 37 | 331.29 | 307.2 |
| 263. | Կաթսայատուն Ֆուրմանովի 1/1 | 314.29 | 297.5 |
| 264. | Կաթսայատուն Ֆուրմանովի 40 | 147.29 | 116.6 |
| 265. | Կաթսայատուն Ֆուրմանովի 56/2 | 328.4 | 318.2 |
| 266. | Կաթսայատուն Հ.Քոչարի 14/3 | 265.37 | 250.5 |
| 267. | Կաթսայատուն Հ.Քոչարի 22 | 216.7 | 212.7 |
| 268. | Կաթսայատուն Բարբյուսի 7 | 78.6 | 72.6 |
| 269. | Կաթսայատուն Սունդուկյան 2 | 208.0 | 208.0 |
| 270. | Խաչատրյան 2-րդ թաղամասի կաթսայատուն | 376.98 | 308.1 |
| 271. | Խաչատրյան 3-րդ թաղամասի կաթսայատուն | 380.0 | 352.8 |
| 272. | Խաչատրյան 4-րդ թաղամասի կաթսայատուն | 342.4 | 305.0 |
| 273. | Կաթսայատուն Վատուտինի 27 | 219.11 | 143.2 |
| 274. | Կաթսայատուն Ծուլուկիձե 16 | 351.8 | 318.2 |
| 275. | Կաթսայատուն Գրիբոյեդով 1/1 | 361.3 | 231.8+112 |
| 276. | Կաթսայատուն Կուտուզով 38 | 275.18 | 253.0 |
| 277. | Պոլիվինիլացետատ գործարանի բանավանի կաթսայատուն | 203.0 | 151.3 |
| 278. | Կաթսայատուն Արաբկիր 51/9 | 363.8 | 356.2 |

| | | | |
|---|---|---|---|
| 279. | Կաթսայատուն Վրացական 4/7 | 185.9 | 160.4 |
| 280. | Կաթսայատուն Ավետյան 70 | 1210.0 | 600 |
| 281. | Կաթսայատուն Օրբելի 67 | 1117.7 | 617.7 |
| 282. | ԿՋՀ Կրուպսկայա 1/1 | 183.96 | 166.4 |
| 283. | ԿՋՀ Ժամացույցի գործարանի բանավան | 46.0 | 46.0 |
| 284. | ԿՋՀ Կիեւյան 3 | 162.54 | 162.5 |
| 285. | ԿՋՀ Օրբելի 2 | 534.5 | 486 |
| 286. | Խաչատրյան 1-ին թաղամասի կաթսայատուն | 339.2 | 339.2 |
| 287. | ԿՋՀ Կոմիտաս 1/1 | 400.0 | 395.4 |
| 288. | ԿՋՀ Հակոբյան 1 | 108.8 | 108.8 |
| 289. | ԿՋՀ Հակոբյան 11 | 325.0 | 325.0 |
| 290. | ԿՋՀ Մետրո «Բարեկամություն» | 196.48 | 178.1 |
| 291. | ԿՋՀ «Կանազ-1» | 238.14 | 238.14 |
| 292. | ԿՋՀ «Կանազ-2» | 241.8 | 241.8 |
| 293. | Կաթսայատուն Խաչատրյան 3 | 4071.4 | 1000 |
| 294. | Կաթսայատուն Կոմիտաս 54ա | 284.6 | 220.4 |
| 295. | Հումանիտար քոլեջի կաթսայատուն, Մալխասյանց փող. 23/6 | 183.0 | 138.5 |
| 296. | Կաթսայատուն Բաղրամյան 48 | 53.0 | 50.5 |
| 297. | «Ջերմանորոգում» տեղամասի վարչական շենք | 21035.0 | |
| 298. | «Ավտոտրանսպորտ» տեղամասի վարչական շենք | | |
| 299. | Կաթսայատուն Կողբացի 42<br>Ծանոթություն՝ սույն կետում նշված կաթսայատունը, համաձայն ՀՀ կառավարության 2009թ.փետրվարի 19-ի թիվ 168-Ն որոշման, ենթակա է օտարման գերակա հանրային շահ ճանաչված | 259 | 212 |

| | | | |
|---|---|---|---|
| | տարածքի ձեռք բերող «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊԸ-ին: | | |

**բ. Երեւան քաղաքի ջերմամատակարարման համակարգի շինություններում առկա մետաղի ջարդոն:**

## 2) ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ

| հ/հ | Գույքի անվանումը | Հասցեն | գույքի ընդհանուր մակերեսը /ք.մ/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | տարածք | 16թաղ. 32/123 | 15,9 |
| 2 | տարածք | 16թաղ. 32/122 | 20,0 |
| 3 | տարածք | Հասրաթյան 16-25 | 33,7 |
| 4 | տարածք | Մազմանյան 5/6 | 47,3 |
| 5 | տարածք | Շինարարաների 7/74 | 60,6 |
| 6 | տարածք | Բաշինջաղյան 192 | 9,02 |
| 7 | տարածք | Հալաբյան 27-75 | 56,7 |
| 8 | տարածք | Լուկաշին 43/2-77 | 39,9 |
| 9 | տարածք | 16թաղ.25 | 72,8 |
| 10 | տարածք | 16թաղ.45/122 | 48,7 |
| 11 | տարածք | Կոմիտաս 56 | 88,6 |
| 12 | տարածք | Ն.Ադոնց 17 | 70,2 |
| 13 | տարածք | Հ.Էմինի 4/5 | 45,0 |
| 14 | տարածք | Նոր Արեշ 11փ 139 | 37,5 |
| 15 | տարածք | Արցախի 14դ թիվ 8 | 74,7 |
| 16 | տարածք | Էրեբունու 23 | 862,6 |
| 17 | տարածք | Արցախի 6/1 | 29,6 |
| 18 | նկուղ | Պուշկին 44 | 16,8 |
| 19 | տարածք | Խանջյան 7 | 60,7 |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | տարածք | Աբովյան 23 | 13,7 |
| 21 | տարածք | Բաղրամյան 2 | 38 |
| 22 | նկուղ | Բաղրամյան 21 | 20,1 |
| 23 | տարածք | Սայաթ- Նովա 31 | 67,2 |
| 24 | նկուղ | Աբովյան 37 | 12,3 |
| 25 | նկուղ | Աբովյան 48 | 13 |
| 26 | տարածք | Դեմիրճյան 27 | 62,6 |
| 27 | կիսանկուղ | Պուշկին 51 | 73 |
| 28 | կիսանկուղ | Ջրաշատ 92/1 | 39,1 |
| 29 | նկուղ | Սայաթ-Նովա 33 | 56,68 |
| 30 | տարածք | Կպագրիչներ 5Ա | 15,6 |
| 31 | տարածք | Կիլիկիա 4 | 18,5 |
| 32 | նկուղ | Սարյան 38 | 15,1 |
| 33 | տարածք | Իսահակյան 38 | 15,6 |
| 34 | նկուղ | Կորյուն 7/1 | 45,84 |
| 35 | նկուղ | Թումանյան 6 | 52 |
| 36 | նկուղ | Հանրապետության 46 | 53 |
| 37 | տարածք | Աբովյան 32 | 19,7 |
| 38 | տարածք | Պուշկին 39 | 9,75 |
| 39 | տարածք | Ագաթանգեղոսի 29 | 15,7 |
| 40 | տարածք | Զաքյան 8 | 59,3 |
| 41 | տարածք | Աբովյան 38 | 43,3 |
| 42 | նկուղ | Թումանյան 21/1 | 24,9 |
| 43 | տարածք | Սայաթ- Նովա 7 | 18,7 |
| 44 | նկուղ | Աբովյան 23 | 93,8 |
| 45 | նկուղ | Աղայան 19 | 26 |
| 46 | նկուղ | Թումանյան 1 անց. թիվ 28 շ. | 24 |
| 47 | տարածք | Խորենացի 25 | 188,9 |
| 48 | տարածք | Բաղրամյան 21 | 10 |

| | | | |
|---|---|---|---|
| 49 | նկուղ | Թումանյան 6 | 32 |
| 50 | նկուղ | Թումանյան 6 | 25 |
| 51 | նկուղ | Չարենցի 10 | 16 |
| 52 | տարածք | Աբովյան 25 | 12,8 |
| 53 | տարածք | Սայաթ- Նովա 9 | 21,6 |
| 54 | նկուղ | Խանջյան 35 | 29,4 |
| 55 | կիսանկուղ | Թումանյան 1 անց. թիվ 13շ. | 45.7, որից 1.4 ընդ. օգտ. |
| 56 | նկուղ | Աբովյան 62 | 39,3 |
| 57 | կիսանկուղ | Մաշտոցի 18 | 13,2 |
| 58 | տարածք | Նալբանդյան 50 | 5,2 |
| 59 | նկուղ | Վարդանանց 11 | 75,5 |
| 60 | կիսանկուղ | Նալբանդյան 23 | 67,6 |
| 61 | կիսանկուղ | Թումանյան 24 | 11,2 |
| 62 | կիսանկուղ | Սայաթ- Նովա 21 | 18 |
| 63 | տարածք | Չարենցի 66 | 48,4 |
| 64 | կիսանկուղ | Բաղրամյան 1-ին փակ. 14 | 19,2 |
| 65 | նկուղ | Արշակունյաց 6 | 62,7 |
| 66 | տարածք | Չարենցի 9 | 70,2 |
| 67 | նկուղ | Մաշտոցի 38 | 10,9 |
| 68 | տարածք | Նալբանդյան 50 | 14 |
| 69 | տարածք | Աբովյան 22ա | 27,5 |
| 70 | նկուղ | Ամիրյան 7 | 11,2 |
| 71 | տարածք | Քոչար 1 | 11,7 |
| 72 | կիսանկուղ | Խանջյան 35 | 17,8 |
| 73 | տարածք | Այգեստան հ. 10/2 | 63,1 |
| 74 | կիսանկուղ | Նալբանդյան 47 | 8,6 |
| 75 | տարածք | Իսրայելյան 37 | 81 |
| 76 | նկուղ | Բաղրամյան 30 | 98,7 |

| | | | |
|---|---|---|---|
| 77 | տարածք | Մաշտոցի 6 | 44,4 |
| 78 | կիսանկուղ | Բայրոնի 4 | 60 |
| 79 | տարածք | Սայաթ- Նովա 35 | 123,3 |
| 80 | նկուղ | Նալբանդյան 9 | 99,4 |
| 81 | տարածք | Փարպեցի 11ա | 68 |
| 82 | տարածք | Կորյուն 9 | 22,8 |
| 83 | կիսանկուղ | Բաղրամյան 1-ին փակ. 14 | 38 |
| 84 | տարածք | Հանրապետության 32 | 130,9 |
| 85 | տարածք | Աբովյան 22ա | 66,8 |
| 86 | տարածք | Նար- Դոս 75 | 9 |
| 87 | կիսանկուղ | Մաշտոցի 42 | 20 |
| 88 | տարածք | Իսրայելյան 37 | 16,5 |
| 89 | կրպակաշար | Տ. Մեծ 53/4 կրպակաշար | 80 |
| 90 | տարածք | Քոչար 1 | 40.7 |
| 91 | նկուղ | Աղայան 9 | 81.6 |
| 92 | տարածք | Տպագրիչներ 5ա | 15.6 |
| 93 | տարածք | Չարենցի 21 | 74.9 |
| 94 | տարածք | Ամիրյան 13 | 10.4 |
| 95 | տարածք | Իսրայելյան 39 | 60.6 |
| 96 | տարածք | Նալբադյան 37 | 46.3 |
| 97 | տարածք | Պուշկին 43 | 183.4 |
| 98 | կրպակաշար | Տ. Մեծ 53/4 | 100.0 |
| 99 | տարածք | Հերացի 16 | 107.5 |
| 100 | տարածք | Խորենացի 43 | 92.3 |
| 101 | տարածք | Իսրայելյան 37 | 99.4 |
| 102 | տարածք | Բաղրամյան 21 | 63.8 |
| 103 | տարածք | Նալբանդյան 17 | 52.0 |
| 104 | տարածք | Հանրապետության 62 | 62.5 |
| 105 | տարածք | Քոչար 9 | 60.3 |

| | | | |
|---|---|---|---|
| 106 | տարածք | Քոչար 9 | 230.5 |
| 107 | տարածք | Քոչար 9 | 199.3 |
| 108 | նկուղ | Նար- Դոս 36 | 38.4 |
| 109 | կիսանկուղ | Զավարյան 29 | 91.5 |
| 110 | կիսանկուղ | Նալբանդյան 50 | 257. |
| 111 | տարածք | Լեո 9 | 96.2 |
| 112 | տարածք | Չարենցի 4 | 10 |
| 113 | տարածք | Նար- Դոս 36 | 40 |
| 114 | նկուղ | Թումանյան 15 | 73.8 |
| 115 | տարածք | Նալբանդյան 29 | 33.1 |
| 116 | տարածք | Տ.Մեծի 53 | 199.1 |
| 117 | կիսանկուղ | Մաշտոցի 50ա | 14.6 |
| 118 | կիսանկուղ | Մաշտոցի 50ա | 21.2 |
| 119 | տարածք | Զավարյան 57/19 | 466.9 |
| 120 | տարածք | Բայրոնի 10 | 73.5 |
| 121 | տարածք | Իսրայելյան 37 | 86.3, որից 5.9 ընդ. օգտ. |
| 122 | նկուղ | Նալբանդյան 3 | 85.2 |
| 123 | տարածք | Մոսկովյան 8 | 9.4,<br>11.1 ընդհանուր |
| 124 | նկուղ | Աբովյան 26 | 209.5 |
| 125 | տարածք | Սայաթ- Նովա 39 | 256.3 |
| 126 | կիսանկուղ | Նար- Դոս 36 | 42 |
| 127 | տարածք | Չարենցի 4 | 48.9 |
| 128 | տարածք | Չարենցի 10 | 48.5 |
| 129 | կիսանկուղ | Նալբանդյան 50 | 464 |
| 130 | տարածք | Վարդանանց 26 | 59.6 |
| 131 | տարածք | Տ. Մեծ 30 | 148.8 |

| | | | |
|---|---|---|---|
| 132 | կիսանկուղ | Թամանյան 6 | 103 |
| 133 | տարածք | Մաշտոսի 20 | 37.8 |
| 134 | տարածք | Բաղրամյան 1 | 17.75 |
| 135 | նկուղ | Պուշկին 31 | 58.4 |
| 136 | տարածք | Զավարյան 57/19 | 171 |
| 137 | տարածք | Սայթ- Նովա 37 | 236.2 |
| 138 | տարածք | Խորենացի 25 | 50 |
| 139 | տարածք | Խորենացի 25 | 30 |
| 140 | կիսանկուղ | Խորենացի 2 | 12.8 |
| 141 | տարածք | Կուզնեցով 14 | 120.9 |
| 142 | տարածք | Խանջյան 15 | 43,00 |
| 143 | Հասարակականտարածք | Հ/Ա Բ-2 թ 92շ | 58,7 |
| 144 | Հասարակական շինություն | Ծերենցի 5շ 95 շինություն | 213,6 |
| 145 | հասարակական | Տիգրանյան 38 | 42,3 |
| 146 | հասարակական | Տիգրանյան 38 | 28,5 |

Օտարման ենթակա են նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 13-ի թիվ 42, 2005 թվականի օգոստոսի 18-ի N 2415-Ն եւ 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1923-Ն որոշումներով Երեւանի թաղային համայնքներին սեփականության իրավունքով հանձնված եւ ներկայումս Երեւան համայնքի սեփականությունը հանդիսացող ոչ բնակելի տարածքները, շենքերն ու շինությունները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 604-Ն որոշումով Երեւան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված ոչ բնակելի տարածքները, շենքերն ու շինությունները, որոնց նկատմամբ դեռեւս չի գրանցվել Երեւան համայնքի սեփականության իրավունքը:

## 3) ՀՈՂԱՄԱՍԵՐ

**Երեւան համայնքին սեփականության իրավունքով անհատույց փոխանցված հողերի 30 /երեսուն/ տոկոսը:**

## 4) ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՉՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ (ՉՄԱՄՆԱՎՈՐԵՑՎԱԾ) ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ

5) ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

6) ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔ

7) ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱԾՎԵԿՇՌՈՒՄ ՀԱԾՎԱՌՎԱԾ ԼՐԻՎ ՄԱԾՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔ

## V. ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

29. Սույն գլխով կարգավորվում է Գույքի օգտագործման տրամադրելու հարցերը, Գույքի վարձակալության եւ կառուցապատման վարձավճարների չափերը:

30. Ծրագրի 29-րդ կետում նշված՝ վարձակալության տրամադրվող Գույքի (տարածքի) ամսական վարձավճարի չափը որոշվում է համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության կարգը հաստատելու մասին» N 125 որոշման:

31. Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ուղղակի կամ աճուրդի ձեւով:

32.Վարձակալության տրամադրվող Գույքի (տարածքի) վերաբերյալ հայտարարությունները պարբերաբար ներկայացվում են մամուլում եւ (կամ) Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

33. Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ուղղակի ձեւով, եթե առկա է հետեւյալ դեպքերից որեւէ մեկը՝

1) եթե՝ համայնքի ինչպես սեփականության իրավունքի պետական գրանցում ունեցող, այնպես էլ սեփականության իրավունքի գրանցում չունեցող անշարժ գույքի վարձակալները (որոնց հետ ստորագրված վարձակալության պայմանագրերը նոտարական վավերացում չեն ստացել, կամ այդ պայմանագրերը նոտարական վավերացում ստացել են, սակայն սահմանված ժամկետներում անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցում չեն ստացել) ամբողջությամբ վճարել են կամ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից հաշվարկված վճարները վճարելու եւ վարձակալական պայմանագիր կնքելու մասին գրավոր առաջարկություն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կվճարեն հաշվարկված վճարները,

2) եթե տվյալ Գույքի վարձակալը պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում կատարել է պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները՝ առանց խախտումների,

3) եթե մամուլում եւ (կամ) Երեւան քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հայտարարության հրապարակումից հետո առաջին հայտը ներկայացվելու օրվանից 10-օրյա ժամկետում այլ հայտեր չեն ներկայացվել, եւ դիմողը միանվագ վճարում է առնվազն 3 ամսվա համար հաշվարկված վարձավճարը:

34. Ծրագրի 33-րդ կետում նշված դեպքերում Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում աճուրդով, ընդ որում՝ վարձավճարի մեկնարկային գինը որոշվում է ծրագրի 30-րդ կետով սահմանված կարգի համաձայն որոշված վարձավճարի չափով:

35. Վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը սահմանվում է՝

1) հողի վարձակալության դեպքում՝ տվյալ հողամասի կադաստրային արժեքի 3 տոկոսի չափով,

2) կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքում՝ տվյալ հողամասի կադաստրային արժեքի 3 տոկոսի չափով:

36. 2010 թվականի ընթացքում.

1) օգտագործման (վարձակալության կամ կառուցապատման) կարող են տրամադրվել այն հողամասերը, որոնք մինչեւ Ծրագրի հաստատվելը տրված են եղել վարձակալության եւ (կամ) կառուցապատման իրավունքով եւ 2010 թվականի ընթացքում ավարտվում է վարձակալության եւ (կամ) կառուցապատման պայմանագրերի գործողության ժամկետը,

ինչպես նաեւ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց չփոխանցվող հողամասերը:

2) վարձակալության կարող է տրամադրվել Երեւանի Բուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի տարածքները, Երեւան քաղաքի ստորգետնյա անցումները, այլ շենքերն ու շինությունները, ինչպես նաեւ Ծրագրի 28-րդ կետում նշված շենքերը, շինություններն ու ոչ բնակելի տարածքները:

3) օգտագործման (վարձակալության կամ կառուցապատման) կարող են տրամադրվել այն շենքերը, շինությունները կամ դրանց տարածքները, որոնք մինչեւ Ծրագրի հաստատվելը տրված են եղել վարձակալության եւ (կամ) կառուցապատման իրավունքով եւ 2010 թվականի ընթացքում ավարտվում է վարձակալության եւ (կամ) կառուցապատման պայմանագրերի գործողության ժամկետը,

4) Գույքը (տարածքը) անհատույց օգտագործման կարող է հանձնվել բացառապես Երեւանի ենթակայության կազմակերպություններին:

37. Գույքի օգտագործման տրամադրելուց ստացված միջոցներն ուղղվում են Երեւան համայնքի բյուջե:

38. Աճուրդով Գույքի վարձակալության տրամադրման անցկացման կարգը սահմանում է Երեւանի քաղաքապետը:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում Երեւանի սեփականություն համարվող գույքը (ներառյալ՝ հողի եւ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում մասնակցության) օգտագործման տրամադրելու եւ օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, դրանց վարձավճարների եւ օտարման գների չափերի ու պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների վերաբերյալ:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության կարգը հաստատելու մասին» N 125, 2003 թվականի հունիսի 13-ի «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առեւտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող եւ դրանց ամրացված գույքի օտարման կարգը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի փետրվարի 25-ի N 92 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 882-Ն, 2007 թվականի ապրիլի 19-ի «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման 2007 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 472-Ն որոշումների դրույթները,

Նախագծի ընդունումն ուղղված է նաեւ բյուջեի եկամուտների ապահովմանը:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի ավագանու «Երեւան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երեւան քաղաքի ավագանու այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ եւ/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ